# «Տեսնես, մեզ մոտ մշակույթի հանդեպ երբեւիցե կլինի՞ «հոլանդական մոտեցում»

**Զրուցակիցս ...եւանի գեղարվեստի ...տական ինստիտուտի ...եկտոր, արվեստագետ ...ամ Իսաբեկյանն է, ...արդ, որին, հիրավի, ...արելի է տոհմական նկարիչ անվանել:**

...չ միայն ծնողներս, այլեւ ազ...ններս նկարիչներ, արվես...ներ են: Հայրս Էդուարդ Իսա...նն է, ծագումով իգդիրցի եւ ...լ ունի գրած՝ «Իգդիր»: Վեր...ական ստեղծագործությունն ...ց այնպես պրոֆեսիոնալ գր...ված, որ մի շնչով է կարդաց... Մայրս նկարչուհի Արփենիկ ...անդյանն է՝ Վահան Տերյա...զգականուհին, հորեղբայրս ...նի ճարտարապետ Հրայր Ի...կյանը, մորեղբայրս՝ Դմիտրի ...անդյանը...

**...երեք, բայց Ձեր մորեղբայրը, ...ընկալվեց ու ժողովրդի հի...թյան մեջ մնաց միանգա...ակասական: Նրա լենինյան ...ժնեւյան շարքերը որոշակի ...երմունք ստեղծեցին նրա**

...տեք, սա շատ վիճելի ու բարդ է: Օրինակ, եթե ինձ այսօր ...իրեին Ռոբերտ Քոչարյանի ...նկարը ստեղծել, մեծ սիրով ... այդ աշխատանքը եւ, կար...մ, որեւիցե մեկ այլ նկարչից ...: Ու դրանից չէր հետեւի, որ ...ն հաճոյացա, կամ էլ՝ «նո...ստուրային», «պալատական» ...չ եմ դարձել: ...ան ու Վելասկեսն էլ պալա... նկարիչներ են եղել, արքա... ու նրանց ընտանիքներին ...: Եվ եղել են իրենց ժամա...րի լավագույն նկարիչները, ...նելի, հանճարեղ: Եվ արքա...լ պատահական ընտրություն ...ում...

...տրի Նալբանդյանին ճա...այի վարչապետ Նակասոնեն ...րեց իր մոտ հյուր, նա ի՞նչ է, ...ժնեւի համախոհը, «արքա...» չէր, նույնն արեց Ինդիրա ...ն, շատ այլ պետական, քա...կան գործիչներ: Նալբանդյանի հանդեպ վերաբերմունքն էլ մի փոքր այլ էր, նրան ի սկզբանե այստեղ չընդունեցին, նա էլ թողեց-գնաց Մոսկվա: Իսկ երբ այնտեղ սկսեց իր քաղաքական դիմանկարները ստեղծել, այստեղից միտումնավոր կամպանիա սկսեցին նրա դեմ:

**-Ի՞նչ, ուզում եք ասել, որ այստեղ նախանձի, խանդի մոտիվներն էին գործում:**

-Անպայման: Համոզված եմ, նրանցից շատ-շատերը, որ քննադատում էին «նրա բրեժնեւյան հակումները», իրենք էլ մեծ սիրով Բրեժնեւին կնկարեին, եթե նման պատվի արժանանային: Եվ հետո, նա միայն Բրեժնեւին ու Լենինին չի նկարել: 2000-ից ավելի կտավներ ունի, չքնաղ բնանկարներ, արվեստի լուրջ գործեր: Գտնվելով Մոսկվայում՝ շատ հայ արվեստագետների է սատարել, ուզում էր իր ողջ ժառանգությունը, ստեղծագործությունները կտակել Հայաստանին, իսկ այստեղից նույնիսկ թանգարան բացելու առաջարկ էլ չարեցին:

Ընդհանրապես, մեզանում արվեստի, արվեստագետի հանդեպ վերաբերմունքը շատ բացառիկ է: Ունենալ այդպիսի ներուժ եւ այդ ամենը հասցնել ներկայիս վիճակին...

**-Երեւի թե, այստեղ արդեն խոսում է ոչ միայն Իսաբեկյան-նկարիչը, այլեւ բուհի ռեկտորը, ադմինիստրատորը:**

-Ես կասեի՝ գեղարվեստի ինստիտուտը ուղղակի բուհ չէ, սա ուսումնական հաստատության ու մշակութային կենտրոնի մի համադրություն է: Ափսոս, միայն՝ շատ անմխիթար վիճակում հայտնված: Եվ այս վիճակի արմատները գնում են դեպի խորհրդային տարիներ: 1945-ին մեզ տրամադրեցին անշուք մի շինություն: Իսկ դուք տեսնեիք, թե ինչ շենքեր էին այն ժամանակ Ռիգայի, Վիլնյուսի, Թբիլիսիի գեղարվեստի ինստիտուտներն ու ակադեմիաները՝ պալատներ: Սանկտ Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան իշխան Մենշիկովի ապարանքում են հիմնադրել: Դե արի ու հիմա, այս գերդժվարին ժամանակներում այս



մեր կիսավեր շինությունը ոտքի կանգնեցրու, կամ էլ՝ մեր պետությունից ակնկալիքներ ունեցիր:

Սա դեռ միայն զուտ շինության պրոբլեմները: Սակայն շատ ավելի լուրջ, մտահոգող պրոբլեմներ կան. դա մոտեցումն է առ արվեստը, մասնավորապես՝ գեղանկարչությունը: Համոզված եմ, որ եթե Բաժբեուկ-Մելիքյանը, ասենք, ֆրանսիացի լիներ, կճանաչվեր որպես համաշխարհային մասշտաբի անկրկնելի նկարիչ: Իսկ գիտե՞ք, թե ինչ վերաբերմունք է արվեստի հանդեպ նույն Ֆրանսիայում, հարեւան երկրներում: Մի քանի, շատ խոսուն փաստեր բերեմ: Նախ, նույն Ֆրանսիայում, եթե որեւիցե անհատ-ձեռներեց, կամ ֆիրմա հովանավորում է արվեստին, ապա մեծապես ազատվում է պետական հարկերից:

**-Իսկ այստեղ, երեւի թե, հովանավորչությունը դատարկ խոսումներից այն կողմ չի գնում:**

-Թերեւս: Որքան եմ դիմել ձեռներեցներին... սփյուռքահայությանը: Եթե միշտ հովանավորեն արվեստը, մեր բուհից ավելի համապատասխան էլ ո՞ւմ են գտնելու:

Ֆրանսիայից սկսեցի, խոսքս շարունակեմ: Վերջերս Փարիզում ինձ առիթ ներկայացավ լսելու նախագահ Շիրակի ելույթը, եւ գիտե՞ք, թե ինչպես սկսեց իր խոսքը. «Ես հպարտ եմ, որ նախագահն եմ մի ժողովրդի, որը տվել է Դելակրուայի պես նկարիչ, Լուվրի պես թանգարան, Հյուգոյի պես գրող...» եւ շարունակում է թվել, սակայն պատահական չէ, որ առաջինը նշում է Դելակրուայի անունը: Փարիզում մի հայ նկարիչ ընկեր ունեմ՝ Արշակ Գառնին: Պատրաստվում է տեղափոխվել Հոլանդիա: Եվ ինչո՞ւ. այնտեղ իշխանությունները յուրաքանչյուր նկարչի, եթե երկրի քաղաքացի է եւ օգնության, օժանդակության կարիք ունի, ամսական 1200 դոլար նպաստ է տալիս՝ «ոտքի կանգնելու համար»: Երեւի թե, ուշացումով գիտակցել են, որ Ռեմբրանտը կամ Վան Գոգը նման դառը ճակատագրի չպիտի արժանանային:

Գերմանիայում վիճակն ավելի բարվոք է, դե ավելի հարուստ երկիր է: Հիմա կասեք, ախր, մենք ո՞ւր, այդ երկրներն ո՞ւր, ի՞նչ իրավունք ունենք նրանց հետ համեմատվելու: Բայց էլի եմ կրկնում, մեր ներուժով, տաղանդով, նույնիսկ դասավանդման մեթոդիկայով նրանց ոչնչով չենք զիջում: Եվ այդքանից հետո իրավունք չունենա՞նք գոնե համեմատվելու:

Վենետիկի Արվեստի ակադեմիան մեզ հետ համագործակցելու առաջարկություն է արել. ի վերջո, Մխիթարյան միաբանությունն իրենց կողքին է եւ մեր արվեստին քաջ ծանոթ են: Բեռլինի Արվեստի բարձրագույն դպրոցի հետ նույնիսկ մի որոշ ժամանակ ակտիվ կապի մեջ էինք, հետո՝ մարեց: Ի՞նչ կարող ենք մենք նրանց առաջարկել մեր հնարավորություններով: Ինքդ էլ ես վատ զգում, երբ առաջարկությունը, նախաձեռնությունը միակողմանի է: Բավարարվում ենք միայն ցուցադրություններ կազմակերպելով, ինչը շատ է նեղացնում ներկայացնելու ողջ հնարավոր զինանոցը՝ մեր հնարավորությունների սահմանները:

Զրուցեց
ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ